

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 6
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2017թ. հունիսի 30-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների հաշվետվություն:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան
2. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս Մամիկոն Մարգարյանի «Ազգային անվտանգություն» դասընթացի մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան
3. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասիստենտ Ռուբեն Էլամիրյանի «Քաղաքական գլոբալացում» դասընթացի մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան
4. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի վարիչ Արմեն Եզեկյանի «Հանրային ծառայության զարգացման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան
5. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի դոցենտ Հասմիկ Ստեփանյանի «Քաղաքացիական իրավունքի իրավիճակային խնդիրներ», «Սահմանադրական իրավունքի իրավիճակային խնդիրներ» և «Սահմանադրական իրավունքի թեստային առաջադրանքներ» ուսումնական ձեռնարկները տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան
6. Ընթացիկ հարց: Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Ռոբերտ Խաչատրյանի «Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները և զարգացման միտումները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան
7. Ընթացիկ հարց: Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արմենակ Այվազյանին Ե.13.04-«Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մատեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:
Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ. Ստեփանյան
8. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Թամարա Արայի Շաքարյանին ԺԲ.00.00-«Իրավաբանական գիտություններ» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:
Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ. Ստեփանյան

9. «Կրեատիվության ուսումնասիրումը կառավարչական գործունեության մեջ», «Արդյունավետ կառավարչի կազմակերպչական և կառավարչական կոմպետենցիաների հոգեբանական գործոնների գնահատում» թեմաներով Հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ-2018» միջազգային մրցույթին մասնակցելու հարցը:

Ձեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան:

1. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:

Գ.Չատինյանը ներկայացրեց, որ 2017-2018 ուսումնական տարվա ասպիրանտուրայի (առկա ուսուցման համար անվճար՝ տարկետման իրավունքով և վճարովի՝ առանց տարկետման իրավունքի, հիմունքներով) ընդունելության համար ՀՀ պետական կառավարման ակադեմիային հատկացվել են հետևյալ տեղերը

Հ/Հ	Դասիչ	Մասնագիտություն	Հատկացված տեղեր	
			Անվճար	Վճարովի
1.	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	2	1
2.	ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	1
Ընդամենը			3	2

Ընդունելության քննություններին մասնակցել են 3 հոգի: Ընդունելության արդյունքների հիման վրա անվճար հիմունքով՝ տարկետման իրավունքով ասպիրանտուրա են ընդունվել՝

1. Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտացմամբ՝ Նարինե Հարությունի Գալոյանը:

2. ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտացմամբ՝ Ջեմմա Կարենի Թորգոմյանը:

Վճարովի հիմունքով՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվել Ֆենյա Հակոբի Բեգլարյանը:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Ա. Եզեկյանը, Գ. Գսպոյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ընդունելի գիտություն (կից ներկայացվում է ասպիրանտուրայի բաժնի պետի զեկուցագիրը):

2. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս Մամիկոն Մարգարյանի «Ազգային անվտանգություն» դասընթացի մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան:

Ձեկուցողը նշեց, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում 19.06.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին տպագրության երաշխավորել ամբիոնի դասախոս Մամիկոն Մարգարյանի «Ազգային անվտանգություն» դասընթացի մեթոդական ուղեցույցը (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Մ. Մարգարյանը:

Որոշեցին՝ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս Մամիկոն Մարգարյանի «Ազգային անվտանգություն» դասընթացի մեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

3. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասիստենտ Ռուբեն Էլամիրյանի «Քաղաքական գլոբալացում» դասընթացի մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան

Ձեկուցողը նշեց, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում 19.06.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին տպագրության երաշխավորել ամբիոնի ասիստենտ Ռուբեն Էլամիրյանի «Քաղաքական գլոբալացում» դասընթացի մեթոդական ուղեցույցը (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Մ. Մարգարյանը:

Որոշեցին՝ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասիստենտ Ռուբեն Էլամիրյանի «Քաղաքական գլոբալացում» դասընթացի մեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի վարիչ Արմեն Եզեկյանի «Հանրային ծառայության զարգացման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան

Ձեկուցողը ներկայացրեց, որ Իրավագիտության ամբիոնում 06.06.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին տպագրության երաշխավորել Իրավագիտության ամբիոնի վարիչ Արմեն Եզեկյանի «Հանրային ծառայության զարգացման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ. Չատինյանը, Գ. Գսպոյանը, Ա. Սարիբեկյանը:

Որոշեցին՝ Իրավագիտության ամբիոնի վարիչ Արմեն Եզեկյանի «Հանրային ծառայության զարգացման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի դոցենտ Հասմիկ Ստեփանյանի «Քաղաքացիական իրավունքի իրավիճակային խնդիրներ», «Սահմանադրական իրավունքի իրավիճակային խնդիրներ» և «Սահմանադրական իրավունքի թեստային առաջադրանքներ» ուսումնական ձեռնարկները տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան

Ձեկուցողը ներկայացրեց, որ Իրավագիտության ամբիոնում 06.06.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին տպագրության երաշխավորել Իրավագիտության ամբիոնի դոցենտ Հասմիկ Ստեփանյանի «Քաղաքացիական իրավունքի իրավիճակային խնդիրներ», «Սահմանադրական իրավունքի իրավիճակային խնդիրներ» և «Սահմանադրական իրավունքի թեստային առաջադրանքներ» ուսումնական ձեռնարկները (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա. Եզեկյանը, Ա. Սարիբեկյանը:

Որոշեցին՝ Իրավագիտության ամբիոնի դոցենտ Հասմիկ Ստեփանյանի «Քաղաքացիական իրավունքի իրավիճակային խնդիրներ», «Սահմանադրական իրավունքի իրավիճակային խնդիրներ» և «Սահմանադրական իրավունքի թեստային առաջադրանքներ» ուսումնական ձեռնարկները երաշխավորել տպագրության:

6. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ռոբերտ Խաչատրյանի «Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները և զարգացման միտումները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ. Չատինյան:

Զեկուցողը նշեց, որ Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ռոբերտ Խաչատրյանը դիմում է ներկայացրել և խնդրել տպագրության երաշխավորել «Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները և զարգացման միտումները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» վերտառությամբ մենագրությունը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կառավարման ամբիոնում քննարկվել է և ամբիոնի դասախոս տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարկոսյանը ներկայացրել է դրական կարծիք մենագրության վերաբերյալ, բացի այդ նշված մենագրությունը տպագրության է երաշխավորվել նաև Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, ուստի առաջարկում եմ բ.գ.թ., դոցենտ Ռոբերտ Խաչատրյանի «Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները և զարգացման միտումները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ռոբերտ Խաչատրյանի «Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները և զարգացման միտումները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

7. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արմենակ Այվազյանին Ե.13.04-«Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մատեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

Հ.Ստեփանյանը նշեց, որ Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արմենակ Յուրիի Այվազյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին:

Ա. Այվազյանը 2007թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 1 գիտական հոդված և 2 մեթոդական ուղեցույց: Ա. Այվազյանը 2009 թվականի հոկտեմբերից առ այսօր աշխատում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում որպես Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների

ամբիոնի վարիչ և դասավանդում է «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային կառավարում» առարկան:

Արտահայտվեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա. Լոքյանը նշեց, որ Արմենակ Այվազյանը որպես ամբիոնի վարիչ ակտիվորեն մասնակցում է ոչ միայն ամբիոնում, այլև ակադեմիայում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներին:

Այնուհետև ակադեմիայի գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը մատնանշեց, որ Ա. Այվազյանը իր աշխատանքն իրականացնում է բարեխղճորեն և արժանի է հայցվող գիտական կոչմանը, ուստի առաջարկեց իրականացնել գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Լիլյա Վարդանյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ. Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 1 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝

1. Հիմք ընդունելով գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 19-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 19, դեմ՝ 0, անվավեր՝ 0) և հաշվի առնելով, որ լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արմենակ Այվազյանի կատարած գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին՝ Արմենակ Յուրիի Այվազյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ Ե.13.04-«Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մատեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ:

2. Միջնորդել ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ հաստատելու սույն որոշումը:

8. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Թամարա Արայի Շաքարյանին ԺԲ.00.00-«Իրավաբանական գիտություններ» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ. Ստեփանյան:

Հ. Ստեփանյանը նշեց, որ Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Թամարա Արայի Շաքարյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին:

Թ.Շաքարյանը 2013թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 6 գիտական հոդված, 2 ուսումնական ձեռնարկ (համահեղինակ) և 1 մեթոդական ուղեցույց: Թ.Շաքարյանը 2013 թվականի սեպտեմբերից առ այսօր ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդում է «Մարդու իրավունքներ», «Վարչական պատասխանատվության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» առարկաները՝ ժամավճարային հիմունքներով:

Արտահայտվեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանը նշեց, որ Թամարա Շաքարյանը որպես ամբիոնի դասախոս ակտիվորեն մասնակցում է ամբիոնում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներին:

Այնուհետև ակադեմիայի գիտական խորհրդի նիստի նախագահ Ա.Լոքյանը մատնանշեց, որ Թ.Շաքարյանն իր աշխատանքն իրականացնում է բարեխղճորեն և արժանի է հայցվող գիտական կոչմանը, ուստի առաջարկեց իրականացնել գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Լիլյա Վարդանյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 2 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝

1. Հիմք ընդունելով գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 19-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 19, դեմ՝ 0, անվավեր՝ 0) և հաշվի առնելով, որ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Թամարա Շաքարյանի կատարած գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին՝ Թամարա Արայի Շաքարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ԺԲ.00.00 «Իրավաբանական գիտություններ» մասնագիտությամբ:

2. Միջնորդել ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ հաստատելու սույն որոշումը:

9. Լսեցին՝ «Կրեատիվության ուսումնասիրումը կառավարչական գործունեության մեջ», «Արդյունավետ կառավարչի կազմակերպչական և կառավարչական կոմպետենցիաների հոգեբանական գործոնների գնահատում» թեմաներով Հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ-2018» միջազգային մրցույթին մասնակցելու հարցը:

Զեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Ադուզումցյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը, Խ.Բեզիրջյանը, Ռ.Աղուզումցյանը:

Որոշեցին՝ Երաշխավորել «Կրեատիվության ուսումնասիրումը կառավարչական գործունեության մեջ», «Արդյունավետ կառավարչի կազմակերպչական և կառավարչական կոմպետենցիաների հոգեբանական գործոնների գնահատում» թեմաներով մասնակցել Հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ-2018» միջազգային մրցույթին:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
30 հունիսի 2017թ.

Կ.Տ.